ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

4 նոյեմբերի 2021 թվականի N 1792 - Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 8-Ի N 483-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 146-րդ հոդվածը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասը և 34-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 8-ի «Ստանդարտների մշակման ծառայությունների 2021 թվականի պետական ծրագիրը, ստանդարտացման 2021 թվականի աշխատանքների ցանկը հաստատելու մասին» N 483-Լ որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված N 2 հավելվածում՝

1) 2-րդ կետի 2.1-ին ենթակետն ուժը կորցրած ճանաչել.

2) 10-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 10.3-րդ ենթակետով՝

«

10.3.	«Արդյունաբերական պարկեր». Տեխնիկական պայմաններ	ՀՀ տնտեսական գործունեության համար արդիականություն	«Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ	ստանդարտ	2021 թ. ընթացքում	Պետական բյուջե և ՀՀ օրենքով չարգելված

	Ազգային ստանդարտի (ՀՍՏ) մշակում	ներկայացնող արդյունաբերական պարկերի կառուցման գործընթացում ազգային ստանդարտի մշակման անհրաժեշտություն	(համաձայնությամբ)			այլ միջոցներ

»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

04.11.2021
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ